

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

1959 · 50 · 2009

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

1 դեկտեմբեր 2009

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ

01/03/2010

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*
Elisabet Fura,
Corneliu BSrsan,
Boštjan M. Zupančič,
Alvina Gyulumyan,
Egbert Myjer,
Ann Power, *դատավորներ,*
և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2009թ. նոյեմբերի 10-ին կայացած դռնփակ նիստում,

Կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2004թ. օգոստոսի 11-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի երկու քաղաքացիներ պրն. Միխայել Խաչատրյանի («առաջին Դիմումատու») և տկն. Էլյանորա Խաչատրյանի («երկրորդ Դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 31761/04 գանգատի հիման վրա: Առաջին և երկրորդ Դիմումատուները (միասին «Դիմումատուներ») գործը ներկայացնում էին ինքնուրույն:

2. ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2006թ. հունվարի 25-ին Դատարանը որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Դատարանը որոշեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Առաջին և երկրորդ Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1957 և 1962թթ. և ապրում են Երևանում:

Ա. Գործի նախապատմությունը

5. Դիմումատուները ամուսիններ են, ովքեր աշխատել են Հրազդանմաշ փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ «Հրազդանմաշ»), որը զբաղվում էր զանազան մեքենաշինական ապրանքների և սարքավորումների արտադրությամբ, որի բաժնետոմսերի մեծ մասը պատկանում է պետությանը:

6. 1998-2000թթ. ընկերության աննձնականգմին աշխատավարձ չվճարվեց, քանի որ Հրազդանմաշը ֆինանսական խնդիրներ ուներ: 2000թ. Հրազդանմաշի աննձնականգմի մեծամասնությանը, ներառյալ Դիմումատուներին, կարգադրում են անորոշ ժամկետով իրենց հաշվին արձակուրդ գնալ:

7. Պարզվում է, որ այդ ժամանակ Հրազդանմաշի դեմ կայացվեցին մի շարք վճիռներ, որոնցով կարգադրվեց ընդհանուր հաշվով 589,009,285 ՀՀ դրամ հարկեր և այլ պարտքեր վճարել պետական բյուջե, ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամ և «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ին: Դատական ակտերի հարկադիր կատարման մի շարք վարույթներ հարուցվեցին:

8. Հետագայում պարզվում է, որ 2000թ. Հրազդանմաշը վերակազմակերպվեց բաց բաժնետիրական ընկերության, որի բաժնետոմսերի մեծ մասի սեփականատերը շարունակեց մնալ Պետությունը:

9. Պետական գույքի արդյունավետ կառավարման նպատակով 2000թ. ապրիլի 24-ի որոշմամբ Կառավարությունը որոշեց կասեցնել Հրազդանմաշի և նմանատիպ այլ ընկերությունների դեմ հարուցված հարկադիր վարույթները և ձեռնպահ մնալ դրանց գույքը բռնագրավելուց, քանի որ տվյալ կազմակերպությունները ընդգրկված էին 1998-2000թթ. պետական գույքի մասնավորեցման ծրագրի մեջ: Պարզվում է, որ 2000թ. դեկտեմբերի 28-ին այս որոշումը ուժը կորցրեց և կատարողական վարույթները վերսկսվեցին:

Բ. Դիմումատուների օգտին կայացված վճիռը և դրա կատարումը

10. 2001թ. մայիսի 17-ին համապատասխան արհմիությունը չվճարված աշխատավարձը և այլ օգուտները բռնագանձելու նպատակով աննձնականգմի անունից Հրազդանմաշի դեմ հայց հարուցեց դատարան:

11. 2001թ. հուլիսի 2-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը հայցը բավարարեց և կարգադրեց, որ Հրազդանմաշը վճարի 58,060,925 ՀՀ դրամ՝ ներառյալ 211,864.51 և 221,157.08 ՀՀ դրամ համապատասխանաբար առաջին և երկրորդ Դիմումատուներին:

12. Ուժի մեջ մտած վճռի դեմ վերաքննիչ բողոք չբերվեց, որը մտավ ուժի մեջ:

13. 2001թ. հուլիսի 23-ին Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության («ԴԱՀԿ») Կոտայքի մարզային ստորաբաժանումը հարուցեց թիվ 738-րդ կատարողական վարույթը: Այս վարույթի արդյունքում դատական ակտերի հարկադիր կատարողը որոշեց բռնագանձում տարածել Հրազդանմաշի սեփականության վրա և սառեցնել բանկային հաշիվները:

14. 2001թ. օգոստոսի 27-ին Կառավարությունն ընդունեց թիվ 775 որոշումը՝ ընդգծելով այն գործողությունները, որոնք պետք է կատարվեին ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների մասնավորեցման գործընթացը կազմակերպելու, նման ընկերություններում ներդրումները խթանելու և արտադրությունը մեծացնելու և զարգացնելու համար: Հրազդանմաշը թվարկված էր այդ կազմակերպությունների շարքում:

15. 2001թ. սեպտեմբերի 10-ին հարկային մարմինները Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան Հրազդանմաշի դեմ հայց հարուցեցին՝ այն սնանկ ճանաչելու և 358,154,700 ՀՀ դրամ բռնագանձելու նպատակով:

16. 2001թ. սեպտեմբերի 11-ի նամակով Առաջին ատյանի դատարանը խնդրեց Հրազդանմաշի գործադիր տնօրենին ի պատասխան ներկայացնել առարկություններ:

17. 2001թ. սեպտեմբերի նամակով (հստակ օրը հայտնի չէ) Արդյունաբերության և առևտրի նախարարի առաջին տեղակալը պատասխանեց Առաջին ատյանի դատարանի նամակին՝ նշելով, որ Հրազդանմաշը Կառավարության որոշմամբ գտնվում է վերակազմակերպման գործընթացի մեջ, և որ Արդյունաբերության և առևտրի նախարարությունը դիմել է Պետական եկամուտների նախարարություն մինչև վերակազմակերպման ավարտը սնանկության գործընթացը կասեցնելու խնդրանքով:

18. 2001թ. սեպտեմբերի 13-ին ԴԱՀԿ-ն որոշեց կասեցնել 738-րդ կատարողական վարույթը, քանի որ Հրազդանմաշի դեմ սկսվել էր սնանկության վարույթ: Ինչևէ, պարզվում է, որ 2001թ. հոկտեմբերի 19-ին կատարողական վարույթը վերսկսվել էր և Հրազդանմաշի սառեցված գույքի մի մասը հրապարակային աճուրդով վաճառվեց, որի արդյունքում առաջին և երկրորդ Դիմումատուներին վճարվեց համապատասխանաբար 16,949 և 17,693 ՀՀ դրամ:

19. 2001թ. նոյեմբերի 12-ին ՀՀ տնտեսական դատարանը սկսեց սնանկության վարույթը:

20. 2001թ. հունվարի 28-ին հարկային մարմինները Կառավարության օգոստոսի 27-ի որոշման հիման վրա հրաժարվեցին սնանկ ճանաչելու պահանջից:

21. 2002թ. փետրվարի 4-ին ՀՀ տնտեսական դատարանը կարճեց սնանկ ճանաչելու վարույթը այդ հիմքով:

22. 2002թ. փետրվարի 22-ին ԴԱՀԿ-ն կրկին որոշեց կասեցնել թիվ 738 կատարողական վարույթը:

23. 2002թ. հոկտեմբերի 24-ին Կառավարությունը ընդունեց թիվ 1682-Ա որոշումը՝ սահմանելով այն գործողությունները, որոնք պետք է կատարվեին Հրազդանմաշը սեփականաշնորհման նախապատրաստելու համար, ինչպես որ պահանջվում էր 2001թ. օգոստոսի 27-ի Կառավարության թիվ 775 որոշմամբ: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարին հանձնարարվեց վերցնել Հրազդանմաշին պատկանող պոլիկլինիկայի շենքը և դա, որպես պետական գույք, փոխանցել Կոտայքի մարզպետարան: Նախարարին, այնուհետև, հանձնարարվեց պարզել Հրազդանմաշին պատկանող օտարման ենթակա գույքի չափը և ներկայացնել տվյալ գույքի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալները: Պետական գույքի կառավարման նախարարին հանձնարարվեց այս տվյալները ստանալուց հետո երկամսյա ժամկետում գնահատել Հրազդանմաշի գույքը, բանակցություններ վարել հնարավոր գնորդների հետ և առաջարկներ ներկայացնել Կառավարությանը:

24. 2003թ. հունվարի 23-ին ԴԱՀԿ-ն որոշեց վերսկսել թիվ 738 կատարողական վարույթը:

25. 2003թ. մարտի 27-ին Կառավարությունը, հղում կատարելով իր 2002թ. հոկտեմբերի 24-ի թիվ 1682-Ա որոշմանը, ընդունեց թիվ 329-Ա որոշումը, որով Հրազդանմաշին թույլ տրվեց վաճառել իր գույքը: Խնդրո առարկա գույքը ներառում էր ընկերության բազմաթիվ շինություններում առկա գույքը, մինչդեռ հաղթող ճանաչված գնորդները տարբեր մասնավոր ընկերություններ էին: Գույքը գնահատվեց ընդհանուր 556,271,000 ՀՀ դրամ և պետք է վաճառվեր իր գնի մոտավորապես 30 տոկոսով: Վաճառքից ստացված գումարը հանձնվեց ընկերությանը և պետք է ուղղվեր պետական բյուջեի պարտքերը մարելուն: Գնորդ ընկերությունները, իրենց հերթին, պետության առջև պարտավորվեցին տարբեր չափերի ներդրումներ կատարել, ներառյալ՝ ստեղծել աշխատատեղեր: Պետական գույքի կառավարման նախարարը պետք է հսկեր առուվաճառքի այս պայմանագրերի կատարումը:

26. 2003թ. հուլիսի 7-ին այս որոշման հիման վրա ԴԱՀԿ-ն կասեցրեց կատարողական վարույթները:

27. 2003թ. հուլիսի 23-ին Կառավարությունն ընդունեց 955-Ա որոշումը, որով որոշվեց Հրազդանմաշի բաժնեմասը վաճառել մասնավոր ընկերության: Բաժնեմասը գնահատվեց 531,616,000 ՀՀ դրամ և պետք է վաճառվեր իր արժեքի մոտավորապես 17 տոկոսով: Գնորդն իր հերթին պետության առջև պարտավորվեց տարբեր չափերի ներդրումներ կատարել՝ ներառյալ ստեղծել աշխատատեղեր:

28. 2003թ. հոկտեմբերին առաջին Դիմումատուն վճիռը չկատարելու վերաբերյալ բողոք ներկայացրեց Հայաստանի Նախագահին: Պարզվում է՝ բողոքը վերահասցեագրվել է ԴԱՀԿ-ին:

29. 2004թ. հունվարի 5-ին Դիմումատուները 2003թ. հուլիսի 7-ի որոշումը վիճարկեցին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան:

Առաջին ատյանի դատարանում դատաքննության ժամանակ ԴԱՀԿ-ի ներկայացուցիչը նշեց, *inter alia*, որ ԴԱՀԿ-ին թույլ չի տրվել օգտագործել Հրազդանմաշի գույքի վաճառքից ստացված գումարն ի կատարումն վճռի, քանի որ այդ գումարները Կառավարության թիվ 329-Ա որոշման համաձայն պետք է ուղղվեին պետական բյուջե: Նա, այնուհետև նշեց, որ Կառավարության 955-Ա որոշման հիման վրա կատարողական վարույթը մնացել է կասեցված:

30. 2004թ. հունվարի 29-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը մերժեց Դիմումատուների հայցը: Մերժելով հայցը՝ դատարանը գտավ.

> «… կատարողական վարույթը Կոտայքի մարզի ԴԱՀԿ բաժնի կողմից կասեցվել է ՀՀ կառավարության 27.03.03թ. թիվ 329-Ա որոշման հիման վրա: Համաձայն ՀՀ ԴԱՀԿ մասին օրենքի 38 հոդ. հարկադիր կատարողը իրավունք ունի կասեցնել կատարողական վարույթը, եթե պարտապանը ներգրավվել է որևէ պետական հանձնարարության մեջ, ուստի ԴԱՀԿ բաժնի գործողությունները, օրինական են և հիմնավորված»:

31. Անորոշ պահի Դիմումատուները վերաքննիչ բողոք բերեցին:

32. 2004թ. ապրիլի 6-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը մերժեց Դիմումատուների բողոքը՝ հաստատելով Առաջին ատյանի դատարանի վճիռը: Վերաքննիչ դատարանն ավելացրեց, որ Հրազդանամշի գույքի օտարումից ստացված գումարը ուղղվել է պետական բյուջե և հարկադիր կատարողին թույլ չի տրվել օգտագործել այդ գումարը կատարողական վարույթի համար: Վերաքննիչ դատարանը այնուհետև նշեց, որ 2003թ. հուլիսի 23-ին Կառավարությունը իր 955-Ա որոշմամբ որոշել է մասնավորեցնել Հրազդանմաշի բաժնետոմսերը: Այս որոշումը, սակայն, չկատարվեց, որի հետևանքով աշխատավարձի վճարման համար գումար չգոյացավ և կատարողական վարույթը չվերսկսվեց:

33. 2004թ. ապրիլի 8-ին դիմումատուները վճռաբեկ բողոք բերեցին: Նրանք պնդեցին, *inter alia*, որ դատարանի վճիռներում օրենքի 38-րդ հոդվածին հղում կատարելը անօրինական է եղել, քանի որ Կառավարության 329-Ա որոշման մեջ ոչինչ չի նշվել այն մասին, որ Հրազդանմաշը ներառված է պետական որևէ հանձնաժողովի մեջ:

34. 2004թ. մայիսի 14-ին Վճռաբեկ դատարանը մերժեց բողոքը՝ նշելով, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները ճիշտ են եղել:

35. 2006թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ գլխավոր դատախազությունը նամակ ուղարկեց ԴԱՀԿ-ին՝ նշելով, որ Հրազդանմաշը Պետությանը գումար է պարտք և որ Կառավարության 329-Ա որոշումը որևէ իրավական հիմք չի ունեցել կատարողական վարույթները կասեցնելու համար, որոնք հարուցվել էին ընկերության նկատմամբ:

36. 2006թ. նոյեմբերի 9-ին ԴԱՀԿ-ն որոշեց վերսկսել կատարողական վարույթը, ներառյալ 738-րդ վարույթը՝ հիմնվելով ՀՀ գլխավոր դատախազության նամակի վրա: Պարզվում է, որ այս

որոշման հիման վրա որոշ գույք և գումար է բռնագրավվել Հրազդանմաշից: Դիմումատուներին, սակայն, որևէ գումար չի վճարվել: Պարզվում է, որ 738-րդ կատարողական վարույթը դեռ ընթացքի մեջ է:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ին)

37. Համաձայն 60-րդ հոդվածի՝ իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար, բացառությամբ սույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

38. Համաձայն 106.3 հոդվածի՝ բաժնետիրական ընկերության մասնակիցները (բաժնետերերը) պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ին)

39. Համաձայն 160.1 հոդվածի, որն ուժի մեջ է եղել խնդրո առարկա ժամանակահատվածում, դատարանի քննությանը ենթակա չեն պետական մարմինների այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, ՀՀ սահմանադրության 100-րդ և քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածներով նշված դեպքերում՝ ներառյալ Կառավարության որոշումները:

Գ. Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենք (ուժի մեջ է մտել 2001թ. դեկտեմբերի 6-ին)

40. Համաձայն 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի՝ ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության

բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար եւ իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

Դ. Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենք (ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ին)

41. Համաձայն 38-րդ հոդվածիի 3-րդ մասի՝ հարկադիր կատարողն իրավունք ունի կասեցնել կատարողական վարույթը, եթե պարտապանը ներգրավվել է որևէ պետական հանձնարարության կատարման մեջ:

42. 39-րդ հոդվածը սահմանում է, որ կատարողական վարույթը կասեցնելու և վերսկսելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում: Կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:

43. Համաձայն 55-րդ հոդվածի 1-ին մասի և 70-րդ հոդվածի՝ գույքի իրացումից ստացված գումարի բաշխումը կատարում է հարկադիր կատարողը: Եթե պարտապանի գույքի վրա բռնագանձում է տարածվել մի քանի կատարողական թերթերով, ապա պարտապանից բռնագանձված գումարը պահանջատերերի միջև բաշխվում է հետևյալ հերթականությամբ. (1) բավարարվում են գրավ դրված գույքի արժեքից բռնագանձում կատարելու մասին գրավով ապահովված պահանջները, (2) բավարարվում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու, ինչպես նաեւ ալիմենտներ բռնագանձելու մասին պահանջները, (3) բավարարվում են աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց աշխատավարձի և հեղինակային պայմանագրե-րով վարձատրությունների վճարման մասին պահանջները և (4) բավարարվում են բյուջե կատարվող պարտադիր վճարումների պարտքերը մարելու մասին պահանջները:

Ե. Հրազդանմաշի կանոնադրությունը

44. Համաձայն կանոնադրության 1.1 և 1.4 պարբերությունների՝ ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Գերագույն Խորհրդի նախագահության որոշմամբ 1994թ. մայիսի 6-ին: Ընկերությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր

բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

ՕՐԵՆՔԸ

Ի.ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ և 1-ին ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

45. Դիմումատուները բողոքեցին, որ դատարանի կողմից իրենց օգտին կայացված վճիռը չի կատարվել: Դիմումատուները իրենց պնդումը հիմնավորեցին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասով և Կոնվենցիային կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով, որոնց համապատասխան մասերը շարադրված են հետևյալ կերպ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մաս

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները … ունի… դատարանի կողմից … արդարացի… դատաքննության իրավունք…»:

1-ին Արձանագրություն 1-ին հոդված

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Ընդունելիությունը

1. Իրավասությունը *ratione temporis*

46. Դատարանը կրկնում է, որ իր իրավասությունը տարածվում է *ratione temporis* միայն պատասխանող Պետության կողմից Կոնվենցիան կամ դրան կից Արձանագրությունները վավերացնելուց

հետո ընկած ժամանակահատվածի վրա: Վավերացնելուց հետո Պետության վիճարկվող բոլոր գործողությունները և անգործությունները պետք է համապատասխանեն Կոնցենցիային և դրան կից Արձանագրություններին, և դրանից հետո տեղի ունեցող գործողությունները ընկնում են Դատարանի իրավազորության տակ, եթե անգամ դրանք ամբողջապես արդեն գոյություն ունեցող իրավիճակի շարունակությունն են (ի թիվս այլոց տես՝ *Յագըճի և Սարգինն ընդդեմ Թուրքիայի* (*Yağcı and Sargın v. Turkey*), 8 հունիս 1995թ., պարբ. 40, սերիա A թիվ 319-A, և *Ալմեյդա Գարրեթ, Մասկարենհաս Ֆալկաո և ուրիշներն ընդդեմ Պորտուգալիայի* (*Almeida Garrett, Mascarenhas Falcço and Others v. Portugal*), թիվ 29813/96 և 30229/96, պարբ. 43 ECHR 2000-I):

47. Դատարանը իրավասու է քննել այս գործի փաստերը Կոնվենցիային համապատասխանելու առումով, միայն այնքանով, որ դրանք տեղի են ունեցել 2002թ. ապրիլի 26-ից հետո, այն օրը, երբ Կոնվենցիան Հայաստանի նկատմամբ ուժի մեջ է մտել: Այն, այնուամենայնիվ, կարող է առնչություն ունենալ մինչև վավերացումը տեղի ունեցած փաստերին, այնքանով, որքանով դրանք կարող էին ստեղծել մի իրավիճակ, որը շարունակվել էր վավերացումից հետո կամ կարող էր կարևոր լինել ավելի ուշ ծագած փաստերը հասկանալու համար (տես՝ *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* (*Broniowski v. Poland*) (որոշում) [GC], թիվ 31443/96, պարբ. 74-77, ECHR 2002-X; և *Գրիգորևն և Կակաուրովան ընդդեմ Ռուսաստանի* (*Grigoryev and Kakaurova*), թիվ 13820/04, պարբ. 25, 2007թ. ապրիլի 12):

48. Վերադառնալով սույն գործի փաստերին՝ Դատարանը նշում է, որ 2001թ. հուլիսի 2-ի վճիռը մինչ օրս մնում է մեծմասամբ չկատարված: 2002թ. ապրիլի 26-ից հետո ընկած ժամանակահատվածը, որը կազմում է ավելի քան յոթ ու կես տարի, հանդիսանում է Դատարանի իրավազորությունը *ratione temporis*:

2. Պատասխանատվությունը *ratione personae* (Պետության պատասխանատվությունը)

49. Կառավարությունը պնդեց, որ Հրազդանմաշը ինքնուրույն իրավաբանական անձ էր և Պետությունը, որպես ընկերության բաժնետեր, պատասխանատվություն չէր կրում վերջինիս պարտավորությունների համար՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի և 106-րդ հոդվածի 3-րդ մասի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի և Հրազդանմաշի կանոնադրության 1.4 պարբերության:

50. Դիմումատուները պնդեցին, որ իրենք հայց են հարուցել Հրազդանմաշի դեմ վնասների հատուցման համար և դատարանները բավարարել են իրենց հայցը: Կառավարությունը և հարկադիր

կատարողները ոչ միայն արհամարհել են դատարանի վճիռները, այլ նաև վերցրել են Հրազդանմաշին պատկանող ամեն ինչ: Հետևաբար, Պետությունը պետք է պատասխանատվություն կրի վճիռը չկատարելու համար:

51. Դատարանը նշում է, որ չնայած Հրազդանմաշը ըստ օրենքների և իր կանոնադրության ունեցել է որոշակի աստիճանի իրավական և տնտեսական անկախություն, իր ակտիվները ղեկավարվել և կառավարվել են Պետության կողմից: Մասնավորապես, Կառավարությունն իր 2002թ. հոկտեմբերի 24-ի որոշմամբ կարգադրել է Հրազդանմաշի սեփականության մի մասը փոխանցել Կոտայքի մարզպետարանին (տես վերը՝ 23-րդ պարբ.): 2003թ. մարտի 27-ի մեկ այլ որոշմամբ Կառավարությունը թույլ է տվել ընկերությանը վաճառել իր սեփականության մեծ մասը և կարգադրել, որ վաճառքից ստացված գումարով մարվի ընկերության կողմից պետական բյուջեին ունեցած պարտքը (տես վերը՝ 25-րդ պարբ.): Ինչ վերաբերում է այս վերջին որոշմանը, պարզվում է, որ «պարտք»-ով ի նկատի են ունեցել հարկային պարտքը, որը ընկերությունը պետք է վճարեր դատարանների կարգադրությամբ: Ինչևէ, ընկերության սեփականության բռնագրավումը և օտարումը պահանջող որոշումը, որն անկասկած ընդունվել էր վերը նշված դատարանների վճիռների կատարման նպատակով, իրականացվել է ոչ թե դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, այլ Կառավարության կողմից: Ավելին, նման քայլով պարզ է դառնում, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգը, որով պահանջվում է, որ աշխատավարձը պետք է վճարվի առաջին հերթին և նոր միայն պետական բյուջեին ունեցած պարտքը, խախտվել է (տես վերը՝ 43-րդ պարբ.): Այնուհետև պարզվում է, որ Պետությունը տնօրինել է Հրազդանմաշի ակտիվները այնպես, ինչպես հարմար է գտել:

52. Դատարանը, այնուհետև, նշում է, որ պետությունը նաև միջոցներ է ձեռնարկել Հրազդանմաշի ֆինանսական վիճակը բարելավելու համար և՛ դատարանների կողմից սահմանված հարկային բռնագանձումները չեղյալ հայտատարելու միջոցով, գուցեև ժամանակավորապես (տես վերը՝ 7-րդ և 9-րդ պարբ.), և՛ ընկերությունում ներդրումներ կատարելու միջոցով (տես վերը՝ 25-րդ և 27-րդ պարբ.): Ավելին, Հրազդանմաշը, լինելով ինքնուրույն իրավաբանական անձ, Կառավարության որոշմամբ ներգրավված է եղել պետական հանձնարարության մեջ (տես վերը՝ 30-րդ պարբ.): Ինչպես արդեն վերը նշվեց, այս հանձնարարությունը ներառում էր, Հրազդանամաշի սեփականության օտարումը մասնավոր ընկերությունների, որոնք իրենց հերթին Պետության առջև պարտավորություն ստանձնեցին ընկերությունում ներդրումներ կատարել:

53. Ի վերջո, Դատարանը նշում է, որ Կառավարությունը, ընդունելով, որ Պետությունը պարտավորություն չի կրում Հրազդանմաշի պարտքերի համար, այնուամենայնիվ, միջոցներ է ձեռնարկել իր պարտավորությունները կատարելու համար. այդպիսի միջոց էր թիվ 955-Ա որոշման ընդունումը (տես ստորև՝ 64-րդ պարբ.): Անդրադառնալով այս որոշման բովանդակությանը՝ Դատարանը ոչ մի դրույթ չի տեսնում, որը, ի հակադրություն Կառավարության պնդման, կպարտավորեցներ հնարավոր գնորդին հանձն առնելու Հրազդանմաշի աշխատավարձի պարտավորությունները (տես վերը՝ 27-րդ պարբ.): Մյուս կողմից, սակայն, Վերաքննիչ դատարանի վճռից պարզ է դառնում, որ Պետությունը նպատակ է ունեցել Հրազդանմաշի իր բաժնեմասի օտարումից ստացված գումարը փոխանցել որպես աշխատավարձի պարտքերի վճարում (տես վերը՝ 32-րդ պարբ.): Հետևաբար, պարզվում է, որ Պետությունն ինքն ընդունել է Հրազդանմաշի պարտքերի համար իր պատասխանատվության որոշակի չափը:

54. Հաշվի առնելով վերը նշված բոլոր գործոնները, Դատարանը համարում է, որ պարտապան ընկերությունը, չնայած այն հանգամանքին, որ ընկերությունը պաշտոնապես ինքնուրույն իրավաբանական անձ էր, Պետությունից չի ունեցել բավարար ինստիտուցիոնալ և գործառնական անկախություն, որպեսզի վերջինիս ազատեր Կոնվենցիայով սահմանված պատասխանատվությունից (տես՝ *Միխայլենկին և ուրիշներն ընդդեմ Ուկրաինայի* (*Mykhaylenky and Others v. Ukraine*) թիվ. 35091/02, 35196/02, 35201/02, 35204/02, 35945/02, 35949/02, 35953/02, 36800/02, 38296/02 և 42814/02, պարբ. 44, ECHR 2004-XII; *Լիսյանսկին ընդդեմ Ուկրաինայի* (*Lisyanskiy v. Ukraine*), թիվ 17899/02, պարբ. 20, 4 ապրիլ 2006թ.; Շլեպկինն ընդդեմ Ռուսաստանի (*Shlepkin v. Russia*), թիվ 3046/03, պարբ. 24, 1 փետրվար 2007թ.; Գրիգորյեվը և Կակաուրովան ընդդեմ Ռուսաստանի (*Grigoryev and Kakaurova v. Russia*), թիվ 13820/04, պարբ. 35, 12 ապրիլ 2007թ.; և Ռ. Կասապորը և ուրիշներն ընդդեմ Սերբիայի (*R. Kačapor and Others v. Serbia*), թիվ 2269/06, 3041/06, 3042/06, 3043/06, 3045/06 և 3046/06, պարբ 98, 15 հունվար 2008թ.): Հետևաբար Պետությունը պետք է պատասխանատվություն կրի Հրազդանմաշի աշխատավարձի պարտքերի համար:

55. Դատարանը, հետևաբար, եզրակացնում է, որ Դիմումատուների գանգատները համապատասխանում են Կոնվենցիայի դրույթներին *ratione personae* և այս առումով մերժում է Կառավարության առարկությունը:

3. Ներպետական պաշտպանության միջոցների սպառումը

56. Կառավարությունը պնդեց, որ Դիմումատուները չեն սպառել ներպետական պաշտպանության միջոցները, ինչպես պահանջվում է

Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասով: Առաջին, քանի որ կատարողական վարույթների կասեցման պատճառը Կառավարության 2003թ. մարտի 27-ի որոշումն էր, նրանք հնարավորություն են ունեցել դատարաններում վիճարկելու այս որոշումը: Երկրորդ, Դիմումատուները կարող էին Հրազդանմաշին սնանկ ճանաչելու հայցով դիմել դատարան, ինչի արդյունքում կարող էին ստանալ իրենց գումարը: Նրանք, սակայն, այս հնարավորություններից և ոչ մեկից չեն օգտվել: Վերջապես, Դիմումատուները հնարավորություն են ունեցել ցանկացած պահի դատարաններում վիճարկելու հարկադիր կատարողների գործողություններն ու անգործությունները 2001թ. հուլիսի 23-ին հարկադիր վարույթը հարուցելուց հետո: Ինչևէ, նրանք այս հնարավորությունից առաջին անգամ օգտվել են միայն 2004թ. հունվարի 4-ին:

57. Դիմումատուները պնդեցին, որ իրենք պարտավոր չեն եղել Հրազդանմաշին սնանկ ճանաչելու հայցով դիմել դատարան, քանի որ այն ուներ բավականին շատ գույք և իրենց օգտին կայացված և ուժի մեջ մտած վճիռ կար, որը ենթադրաբար պետք է կատարվեր: Ավելին, նրանք շատ գանգատներ են ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարին և Հայաստանի Նախագահին և բողոքարկել են հարկադիր կատարողների գործողությունները: Հետևաբար, նրանք, սպառել են իրավական պաշտպանության բոլոր հնարավոր միջոցները:

58. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի նպատակը Պայմանավորվող Պետություններին հնարավորություն տալն է, որպեսզի նրանք կանխեն կամ ուղղել իրենց վերագրվող խախտումները, նախքան գանգատները Դատարան ներկայացնելը: Ինչևէ, սպառման ենթակա են միայն այն միջոցները, որոնք արդյունավետ են կա՛մ ենթադրյալ խախտումը կա՛մ դրա շարունակությունը կանխելու, կա՛մ էլ արդեն տեղի ունեցած խախտման համար բավարար փոխհատուցում տրամադրելու իմաստով (տես՝ *Կուդլան ընդդեմ Լեհաստանի* (*Kudła v. Poland)* [GC], թիվ 30210/96, պարբ. 152 և 158, ECHR 2000 XI): Իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառման հարցը բարձրացնող Կառավարության պարտականությունն է ապացուցել Դատարանին, որ իր կողմից նշված միջոցն արդյունավետ էր, տեսականորեն և գործնականում մատչելի էր քննարկվող ժամանակահատվածում (տես՝ *Ակդիվարը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի* (*Akdivar and Others v. Turkey)*, 16 սեպտեմբեր, 1996թ., պարբ. 68, Վճիռների և որոշումների տեղեկագիր 1996 IV):

59. Դատարանը, նախ և առաջ, նշում է, որ Կառավարության կողմից առաջարկված առաջին միջոցը Դիմումատուներին անգամ մատչելի չի

եղել, քանի որ խնդրո առարկա ժամանակահատվածում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նրանք դատարաններում կառավարության որոշումը վիճարկելու հնարավորություն չեն ունեցել (տես վերը՝ 39-րդ պարբ.): Ավելին, Դիմումատուները օգտվել են իրենց մատչելի միակ միջոցից՝ այն է՝ դատարաններում վիճարկել են կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումը (տես վերը՝ պարբ. 29):

60. Ինչ վերաբերում է սնանկ ճանաչելու վարույթ հարուցելու հնարավորությանը՝ Դատարանը նշում է, որ կար Դիմումատուների օգտին կայացված վճիռ, որն ուժի մեջ էր մտել և ենթակա էր կատարման և որի կատարման համար պատասխանատու էին իշխանությունները, ներառյալ, եթե անհրաժեշտ էր, այնպիսի միջոցի ձեռնարկումը, ինչպիսին է սնանկ ճանաչելու վարույթը: Ավելին, հարկային մարմինների կողմից հարուցված Հրազդանմաշին սնանկ ճանաչելու վարույթը կասեցվել էր, քանի որ Հրազդանմաշը ներգրավված էր պետական մասնավորեցման ծրագրի մեջ (տես վերը՝ 14-րդ, 20-րդ և 21-րդ պարբ.) և վիճելի է, թե Դիմումատուների կողմից այդպիսի վարույթ հարուցվելու դեպքում, այն կունենա՞ր այլ արդյունք:

61. Դատարանը, վերջապես, նշում է, որ Դիմումատուների օգտին կայացրած վճիռը, հավանաբար, չի կատարվել պարտապանների ենթադրյալ անբավավար միջոցների պատճառով, որի պարտքերը վերագրվել են պետությանը (տես վերը՝ 54-րդ պարբ.), մինչդեռ առկա միջոցների մեծ մասը կառավարության որոշմամբ փոխանցվել է պետական բյուջե, որը Դիմումատուները դատարաններում չեն կարողացել վիճարկել: Նման պարագայում Դատարանը գտնում է, որ Դիմումատուները ազատված են եղել հարկադիր կատարողների գործողությունների դեմ հայց հարուցելուց, քանի որ վճռի չկատարումը կախված էր այնպիսի պատճառներից, որոնց հարկադիր կատարողները չէին կարող միջամտել (տես *mutatis mutandis*, *Միխայլենկին և ուրիշները* (*Mykhaylenky and Others*), վերը մեջբերված, 39-րդ պարբ.):

62. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը գտնում է, որ Կառավարության առարկությունը իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառման վերաբերյալ չի կարող ընդունվել, քանի որ այդ միջոցները չէին կարող և դեռ չեն կարող կանխել ենթադրյալ խախտման շարունակությունը: Դատարանը, հետևաբար, մերժում է առարկությունը:

4. Հետևություն

63. Դատարանը նշում է, որ այս գանգատները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով ակնհայտորեն անհիմն չեն: Այնուհետև, Դատարանը նշում է, որ գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է ճանաչվի ընդունելի:

Ք. Գործի ըստ էության քննությունը

64. Կառավարությունը պնդեց, որ Պետությունը պատասխանատու չէր Հրազդանամաշի պարտավորությունների համար և իր պատասխանատվությունը սահմանափակվում էր դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով կատարողական վարույթների պատշաճ իրականացմամբ՝ անկախ դրանց արդյունքից: Կառավարությունը պնդեց, որ համապատասխան կատարողական վարույթները պատշաճորեն կատարվել են և վճիռը ամբողջովին կատարելու անհնարինության պատճառը մասնավոր ընկերության միջոցների պակասն էր: Ավելին, պատասխանատու չլինելով Հրազդանմաշի պարտավորությունների համար՝ Պետությունը միջոցներ էր ձեռնարկում Հրազդանմաշի պարտավորությունները կատարելու համար: Մասնավորապես, Կառավարությունը 2003թ. հուլիսի 23-ին որոշեց մասնավորեցնել Հրազդամանշի բաժնեմասը՝ պարտավորեցնելով գնորդին վճարելու Հրազդանամշի աշխատավարձերի պարտքերը, ինչը, սակայն, տեղի չունեցավ, քանի որ գնորդը հրաժարվեց գործարքից: Իշխանությունները, այնուամենայնիվ, բոլոր ողջամիտ քայլերը ձեռնարկեցին, որպեսզի վճիռը ի կատար ածվի՝ այդպիսով կատարելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրենց պարտականությունները:

65. Դիմումատուները պնդեցին, որ իրենց օգտին կայացված վճիռը պատշաճորեն չի կատարվել: Ընկերության գույքի մեծ մասը կա՛մ յուրացվել է կա՛մ էլ կառավարության որոշումներով փոխանցվել պետական բյուջե: Ուստի, նրանք զրկված են եղել արդար դատաքննության իրավունքից և իրենց սեփականությունից:

66. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Սինչդեռ, այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք) առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և

դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որը անհամատեղելի կլիներ օրինականության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (տես *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* (*Burdov v. Russia*), թիվ 59498/00, պարբ. 34, ECHR 2002-III):

67. Դատարանը նշում է, որ այն արդեն մերժել է Կառավարության այն փաստարկը, որ Պետությունը պատասխանատու չի եղել Հրազդանմաշի պարտքերի համար (տես վերը՝ 54-րդ պարբ.): Այս առումով Դատարանը կրկնում է, որ իշխանությունները չեն կարող որպես վճռի չկատարման արդարացում վկայակոչել միջոցների պակասը: Ինչպես հայտնի է, վճռի կատարման ուշացումը կարող է արդարացվել հազվադեպ պարագաներում: Ինչևէ, այն չի կարող լինել այնպիսին, որ նվազեցնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքի էությունը (տես՝ *Իմմոբիլիարե Սաֆֆին ընդդեմ Իտալիայի* (*Immobiliare Saffi v. Italy*) [GC], թիվ 22774/93, պարբ. 74, ECHR 1999-V):

68. Դատարանը, այնուհետև, կրկնում է իր նախադեպային իրավունքը այն առումով, որ Դիմումատուի օգտին կայացրած վճռի կատարմանը հասնելու անհնարինությունը բերում է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասության մեջ սահմանված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտության (տես, այլ նախադեպերի շարքում *Բուրդովը* (*Burdov*), մեջբերված վերը, պարբ 40, և *Յասիունիենե ընդդեմ Լիտվայի* (*Jasiūnienė v. Lithuania)*, թիվ 41510/98, պարբ. 45, 6 մարտ 2003թ.):

69. Դատարանը նշում է, որ մինչ օրս, 2001թ. հուլիսի 2-ին Դիմումատուների օգտին կայացված վճիռը ընդհանուր առմամբ մնում է չկատարված: Հետևաբար, Դիմումատուների դեպքում պարտքերի վերադարձման ընթացքը մինչև այժմ տևել է ավելի քան ութ տարի և չորս ամիս, որից մոտավորապես յոթ ու կես տարին ընկնում է Դատարանի իրավասության տակ *ratione temporis*: Դատարանը գտնում է, որ Դիմումատուների օգտին կայացված վճռի կատարման համար անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով՝ հայաստանյան իշխանությունները սահմանափակել են Դիմումատուների «դատարան դիմելու իրավունք»-ի իմաստը և զգալի ժամանակահատվածով խոչընդոտել են և դեռ խոչընդոտում են Դիմումատուների՝ գումարն ամբողջությամբ ստանալուն, որի իրավունքը նրանք ունեին, որն էլ հավասարեցվում է իրենց գույքից անարգել օգտվելու անհամաչափ միջամտության:

70. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրան կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

71. Կոնվենցիայի 41-րդ հոդվածն ամրագրում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնաս

72. Դիմումատուները պահանջեցին վճռի ամբողջ գումարի փոխհատուցում (433,021.59 ՀՀ դրամ)՝ գումարած 20,000 եվրո համապատասխանաբար ոչ նյութական և նյութական վնասի համար:

73. Կառավարությունը պնդեց, որ վճռի իրական պարտքը կազմում է 398,379.59 ՀՀ դրամ, քանի որ առաջին և երկրորդ Դիմումատուներին վճռի կատարման ընթացքում վճարվել է համապատասխանաբար 16,949 և 17,693 ՀՀ դրամ: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա Դիմումատուները չեն մատնանշել որևէ պատճառահետևանքային կապ ենթադրյալ խախտման և պահանջվող գումարի միջև: Ամեն դեպքում պահանջվող գումարը չափազանցված էր:

74. Դատարանը նշում է, որ առաջին և երկրորդ Դիմումատուներին կատարողական վարույթի արդյունքում որոշակի գումար է վճարվել (տես վերը՝ 18-րդ պարբ.): Ուստի, նյութական վնասի պահանջը ամբողջ ծավալով չի կարող փոխհատուցվել: Իր տրամադրության տակ գտնվող նյութերի հիման վրա Դատարանը տրամադրում է 365 եվրո առաջին Դիմումատուին և 380 եվրո երկրորդ Դիմումատուին՝ որպես նյութական վնասի փոխհատուցում, որը Դիմումատուներին չվճարված պարտքն է: Դատարանը, այնուհետև, համարում է, որ Դիմումատուները հայտնաբերված խախտման հետևանքով կրել են ոչ նյութական վնաս, որը չի կարող փոխհատուցվել Դատարանի կողմից զուտ խախտում ճանաչելու փաստով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը Դիմումատուներին միասին տրամադրում է 1,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

75. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված

փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք հարյուրերորդական տոկոս:

ՎԵՐԸ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. *Հայտարարում* է դիմումն ընդունելի:

2. *Վճռում* է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

3. *Վճռում* է, որ
(ա) պատասխանող Պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում պետք է վճարի 365 եվրո (երեք հարյուր վաթսունհինգ եվրո) առաջին Դիմումատուին և 380 (երեք հարյուր ութսուն եվրո) երկրորդ Դիմումատուին՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 1,000 (հազար եվրո) երկու Դիմումատուներին միասին՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ փոխարկված պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը,
(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք հարյուրերորդական տոկոս;

4. *Մերժում* է Դիմումատուների արդարացի փոխհատուցման պահանջի մնացյալ մասը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 2009թ. դեկտեմբերի 1-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ